

**2020**

# <<ՌՈՓ ԼԵՆԴ>> ՍՊԸ



## **ԲԱԶՄԱՑՈՒՆՔՅՈՒՆԱԼ ԷՔՍՏՐԵՄԱԼ և ԷԿՕ ՉԲՈՍԱՇՐՉՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԼԻՐ**

ՀՀ Սյունիքի մարզ, Տաթև Համայնք, գյուղ Տաթև

**ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ  
ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ**

**ԿԱՏԱՐՈՂ**

**<<ԲԱԲԱՅԱՆ-ԼԱՏ ՆԱԽԱԳԻԾ>> ՍՊԸ**

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝**

**<<ՌՈՓ ԼԵՆԴ>> ՍՊԸ**

**<<ԲԱԲԱՅԱՆ-ԼԱՏ ՆԱԽԱԳԻԾ>> ՍՊԸ**

**ՀՀ ք. Երևան Տիգրան 34/1**

**Հեռ. բջջ. +374 41 363311**

**[babayan-lat@mail.ru](mailto:babayan-lat@mail.ru)**



ԲԱԶՄԱՖՈՒՆՔՑԻՈՆԱԼ ԷՔՍՏՐԵՄԱԼ և ԷԿՕ ԶԲՈՍԱԾՐՉՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԼԻՐ  
ՀՀ Սյունիքի մարզ, Տաթև Համայնք, գյուղ Տաթև

---

**ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ  
ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՑ**



<<Ռոփ Լենդ>> ՍՊԸ տնօրեն **Գ. Միրոյան**



<<ԲԱԲԱՅԱՆ-ԼԱՏ ՆԱԽԱԳԻՄ>> ՍՊԸ տնօրեն **Ա. Բարսյան**

Երևան 2020

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

1.	ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	4
1.1	Ձեռնարկողի մասին տեղեկություն	4
1.2	Հապավումներ	4
1.3	Նախատեսվող գործունեության նպատակը եվ հիմնավորումը	4
1.4	Նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող նառետարներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ)	8
1.4.1	Ծինարարական աշխատանքների կազմակերպում	8
1.4.2	Ծինարարության օրացուցային պլանը և կադրային ապահովումը	13
1.4.3	Հիմնական տեխնիկական ցուցանիշները	13
1.4.4	Նյութերի և բնառետարների օգտագործում	14
1.5.	Շահագործման փուլ	14
1.5.1.	Ջրամատակարարում և ջրահեռացում	14
1.5.2	Էլեկտրամատակարարում	14
2.	ՆԱԽԱՏԵՄՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ ԾՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՍԽԵՄԱՆ	15
2.1	Ֆիզիկաաշխարհագրական պայմանները	15
2.2	Բուսական աշխարհ	18
2.3	Հողային ռեսուրսներ	21
2.4	Կենդանական աշխարհ	23
2.5	Բնության հատուկ պահպանվող տարածքներ	24
2.6	Կլիման	30
2.7	Օդային ավազան	36
2.8	Թափոնների կառավարում	37
3.	ԾՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱԳԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ	37
3.1	Ռիսկերի գնահատում	37
3.2	Արտանետումների աղբյուրները	39
3.3	Բնապահպանական միջոցառումների ընդհանուր նկարագրություն	39
3.3.1	Մթնոլորտային օդ	39
3.3.2	Ջրային ռեսուրսներ	39
3.3.3	Կենսաբազմազանություն	39
3.3.4	Արտակարգ իրավիճակների պատրաստվածությունը	40
3.3.5	Աղմուկ	41
	ԲՆԱԳԱՀՊԱՆԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ	42
	ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	44
	ԱՄՓՈՓԱԹԵՐԹ	45
	ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ	46

**1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

**1.1 Ձեռնարկողի մասին տեղեկություն**

- 1.2** Ձեռնարկող՝ <<Ռոփ Լենդ>> ՍՊԸ
- 1.3** Ձեռնարկողի իրավաբանական հասցեն՝ << ք. Երևան, Սեբաստիա **22**, բն. **29/1**
- 1.4** Ձեռնարկողի փաստացի գործունեության հասցեն՝ << ք. Երևան, Ազատության պ. **2**, Հաղթանակ զբոսայգի, << Սյունիքի մարզ, Տաթև համայնք, գյուղ Տաթև անտառ [ropeland@mail.ru](mailto:ropeland@mail.ru)
- 1.5** Ձեռնարկողի էլ.հասցեն՝ << Սյունիքի մարզ, Տաթև համայնք, գյուղ Տաթև վարչական շրջան
- 1.6** Նախատեսվող գործունեության վարչական տարածքը՝ **+ (374) 95-988-363, + (374) 77-988-363**
- 1.7** Հեռախոս՝ <<ԲԱԲԱՅԱՆ-ԼԱՏ ՆԱԽԱԳԻԾ>> ՍՊԸ
- 1.8** Աշխատանքային նախագծի մշակող՝

**1.2 Հապավումներ**

- ՀՀ՝ Հայաստանի Հանրապետություն
- ՓԲԸ՝ Փակ Բաժնետիրական Ընկերություն
- ՍՊԸ՝ Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
- ՊՈԱԿ՝ պետական ոչ առևտրային կազմակերպություն
- ԷԿՕ՝ Էկոհամակարգ, Կենսոլորտ, Օրգանիկ

**1.3 Նախատեսվող գործունեության նպատակը եվ հիմնավորումը**

Շրջակա միջավայրի վրա մարդկային գործունեության վնասակար ազդեցության կանխման, կենսոլորտի կայունության պահպանման, բնության և մարդու կենսագործունեության ներդաշնակության պահպանման համար կարևորագույն նշանակություն ունի յուրաքանչյուր նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության ճշգրիտ և լիարժեք գնահատումը: Գործունեության բնապահպանական գնահատումը պետք է ներառի ուղղակի և անուղղակի ազդեցության կանխորոշումը, նկարագրությունը և հիմք հանդիսանա դրանց կանխարգելման կամ հնարավոր նվազեցման պարտադիր միջոցառումների մշակման համար:

Բազմաֆունքիոնալ Էքստրեմալ և ԷԿՕ զբոսաշրջության համալիրը նախատեսվում է կառուցել << Սյունիքի մարզ, Տաթև համայնք, Տաթև գյուղի տարածքում:

Բազմաֆունքիոնալ Էքստրեմալ և ԷԿՕ զբոսաշրջության համալիրի աշխատանքային նախագիծը իրականացված է ՀՀ-ում գործող նորմատիվ փաստաթղթերի պահանջներին համապատասխան:

**2014**թ.-ի հունիսի **21**-ի "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի **14**-րդ հոդվածի համաձայն նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Գ կատեգորիայի գործունեության տեսակ և ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության:

Բազմաֆունքիոնալ Էքստրեմալ և ԷԿՕ զբոսաշրջության համալիրի աշխատաքային նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հայտը մշակված է "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի և բնապահպանական ոլորտի այլ նորմատիվատեխնիկական ակտերի համաձայն: Դրանք են՝

1. “Բուսական աշխարհի մասին” ՀՀ օրենք **(23.11.1999 թ.)**
2. „Կենդանական աշխարհի մասին,“ ՀՀ օրենք **(03.4.2000թ.)**
3. ՀՀ Հողային օրենսգիրք **(02.5.2001թ.)**
4. ՀՀ Ջրային օրենսգիրք **(04.6.2002թ.)**
5. ՀՀ Ընդերքի մասին օրենսգիրք **(28.1.2011 թ.)**
6. ՀՀ Անտառային օրենսգիրք **(24.10, 2005թ.)**
7. Վարչական իրավախախտումների մասին ՀՀ օրենք **(07.02.2012 թ.)**
8. „Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին,“ ՀՀ օրենք **(27.11 2006)**
9. „Մթնոլորտային օդի պահպանության մասին,“ ՀՀ օրենք **(01.1 1.19 94թ.)**
10. „Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին,“ ՀՀ օրենք **(21.0 6.2014 թ.):**
11. „Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության ու օգտագործման մասին,“ ՀՀ օրենք **/11 11 1998 թ./**
12. , ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին **և** ՀՀ կառավարության **29.01.2010 թ. N 72** -Ն որոշումը
13. , ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին **և** ՀՀ կառավարության **29.01.2010 թ. N 71** -Ն որոշումը
14. , ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին **և** ՀՀ կառավարության **31.07.2014 թ. N 781** -Ն որոշումը
15. , ՀՀ բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության և օգտագործման բնագավառում պետական ծրագիրը հաստատելու մասին **և** **25.09.2014 թ. N 1059** որոշում
16. , Հայաստանի Հանրապետության կենսաբանական բազմազանության պահպանության, պաշտպանության, վերարտադրության եվ օգտագործման բնագավառներում ռազմավարությունը **և** **N54** արձանագրային որոշում, **( 10.12.2015)**
17. , Հայաստանի Հանրապետությունում անապատացման դեմ պայքարի ռազմավարությանը եվ գործողությունների ազգային ծրագրին հավանություն տալու մասին **և** **N23** արձանագրային որոշում, **( 27.05.2 015)**
18. ՀՀ կառավարության **N 108** -Ն որոշում **(08.02.2018)**

Չբոսաշրջությունը երկրի տնտեսության զարգացող ճյուղերից մեկն է, այն նպաստում է կայուն տնտեսական առաջընթացին, շրջակա միջավայրի պահպանությանը, համաչափ տարածքային տնտեսական զարգացմանը և աղքատության հաղթահարմանը : Էկոտուրիզմով Հայաստանը դեռևս ճանաչված չէ միջազգային շուկայում, ուստի մեր ջանքերը պետք է ուղղված լինեն նրան, որ մեր երկիրը ճանաչելի դարձնենք աշխարհում: Գյուղական մշակույթով ու կենցաղով, ազգային խոհանոցով երկիրը կարող է գրավել ցանկացած զբոսաշրջիկի: Օտարերկրյա զբոսաշրջիկին սկսել է հետաքրքրել հայկական գյուղը՝ հայ գյուղացու առօրյայով ու ապրելակերպով: Մեր ծրագրով նախատեսվում է խթանել Էկոտուրիզմի զարգացումը՝ ստեղծել տուրիստական հանգստի գոտի **(Էքստրիմ զոննա):** Այս նախագծում իրականացվելու է երկու հիմնական մասեր՝ Էկո զոննա և Էքստրեմալ ակտիվություններ, ծրագիրը իրագործվելու է **երեք փուլով : Առաջին փուլում** նախատեսվում է իրականացնել ՝ ճամբարային գոտի **(վրաններ) ,** խարույկատեղի, արշավներ բնության գրկում, ձիարշավ և զիփայն:

**Ճամբարային գոտին** Հանախորդի պահանջի պահին կտեղակայվի վրանը և հանախորդի հեռանալուց կապամոնտաժվի: Հանախորդին կտրամադրվի քնապարկ, իսկ տարածքը կհսկվի անվտանգության աշխատակիցների շնորհիվ:



**Խարույկատեղին** պետք է պարունակի այնպիսի ինտերիեր, որպեսզի կրակի շուրջ հավաքվածները յուրացնեն իրենց ջերմության չափաբաժինը: Անվտանգության առումով նույնիսկ **20** մվ արագության քամու ժամանակ կրակը տարածվելու առիթ չունենա: Անվտանգության աշխատակիցները **24** ժամ կապահովեն անվտանգ հանգիստ:

**Էկոարշավ** կամ արշավներ բնության գրկում կազմակերպվելու է ամբողջ Սյունիքի տարածքում անդեն գործող արշավական արահետներով: Էկոարշավների ժամանակահատվածում զբոսաշրջիկը կձանդանա Հայկական բնաշխարհի հրաշքներին: Կկազմակերպվեն բազմաբնույթ արշավական խաղեր և ժամանցային միջոցառումներ: Արշավները կազմակերպվելու են մեկից երեք օր(գիշերակացով) տևողությամբ:

**Զիարշավները** կազմակերպվելու է համայնքի բնակչության սեփականություն հանդիսացող ձիերի շնորհիվ, որոնք վարձակալվելու են հենց գյուղացուց: Ձիերի խնամքի և կացության խնդիրը ըստ համապատասխան պայմանագրերի լուծելու է ձիու սեփականատեր գյուղացին: Զիարշավները կազմակերպվելու է Սյունաց աշխարհի գեղատեսիլ վայրերում ըստ զբոսաշրջիկի ընտրած ուղու:

**Զիփլայն** Քայլ արա և հաղթահարիր վախի գգացումը, վայելելով Թռչնի Թռիչքը տարածության մեջ: Ամբողջ հաշվարկային շինարարական մասնիկները և մետաղական նյութերը համապատասխանում են եվրոպական DIN3066, DIN741, DIN1587, DIN5299 ստանդարտներին: Էքստրեմալի Անվտանգության համակարգը համապատասխանում է EN, ANSI, NFPA միջազգային ստանդարտներին:

**Ավտոմեքենաների** կայանման համար նախատեսված բացօթյա տարածքում միաժամանակ կարող է կայանել 1 ավտոբուս, 4 մինիվեն, 7 թեթև մարդատար ավտոմեքենա:



Բնապահպանական ազդեցության գնահատման այս զեկույցը նկարագրում է նախատեսվող գործողությունները, բնապահպանական ելակետային պայմանները, հնարավոր ազդեցությունները, բնապահպանական ազդեցության գնահատման շրջանակը:

Բնապահպանական ազդեցության գնահատումը պատրաստվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն: Կանաչապատման գործընթացը կազմակերպվելու է հաշվի առնելով տարածաշրջանային բուսատեսակային կազմը: Ընդհանուր առմամբ կանաչապատման գործընթացը կրելու է ֆորմալ բնույթ քանի որ հողաքանդման աշխատանքները փոքր ծավալով են լինելու և վերականգնման ենթակա է լինելու բացառապես այդ տարածքը: Աշխատանքների ընթացքում այլ հողեր չեն խախտվելու: Կանաչապատումից հետո ոռոգումը լինելու է բնական ճանապարհով, տեղումների միջոցով կամ չոր եղանակին դույլերի միջոցով:

Իսկ շին.աշխատանքների ընթացքում տեխնիկական ջուրը մատակարարվելու է ցիստեռներով և բաքերով: Ընդհանուր առմամբ շինարարական փոքր ծավալները թույլ են տալիս անմիջապես ջուրը մատակարարել և օգտագործել: Ջրի ժամանակավոր պահեստարաններ չեն նախատեսվում: Չի նախատեսվում նաև շինարարական աշխատանքներից արտահոսող ջրեր, քանի որ մատակարարված ամբողջ ծավալով ջուրը կիրառվելու է միայն ջրցանի համար և սպառվելու է: Խմելու ջուրը ևս մատակարարվելու է բաքերով ու ստերիլ շշերով՝ համայնքի գոյություն ունեցող ջրագծից:

Աշխատանքների կատարումը չի նախատեսում ունենալ կենտրոնացված արտադրահրապարակ, լինելու են փոքրիկ շինհրապարակներ՝ որոնք ամբողջովին շրջափակված են լինելու:

**Սոցիալական ոլորտ**

Տեղի բնակչության սոցիալական վիճակը բարելավելու նպատակով նախատեսվում են հետևյալ միջոցառումները.

- Շինարարական աշխատանքների իրականացման, ինչպես նաև Բազմաֆունքցիոնալ համալիրի շահագործման համար հնարավոր չափով կներագրավեն տեղի բնակիչները, ինչը կնպաստի նրանց սոցիալական վիճակի բարելավմանը,
- “Ռոփ Լենդ” ՍՊԸ հնարավորությունների սահմաններում կմասնակցի Տաթև գյուղական համայնքի առավել անհետաձգելի սոցիալական խնդիրների լուծմանը, նպատակաուղղված միջոցառումների պլանավորմանը և իրականացմանը:

**1.4 Նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ)**

**1.4.1 Շինարարական աշխատանքների կազմակերպում**

ՀՀ Սյունիքի մարզ, Տաթև համայնք, գյուղ Տաթևի տարածքում, վարձակալության իրավունքով <<Ռոփ Լենդ>> ՍՊԸ-ին տրված հողատարածքներում նախատեսվող բազմաֆունքցիոնալ Էքստրեմալ և ԷԿՕ զբոսաշրջության համալիրի նախագիծը կատարված է անշարժ գույքի վկայականների **(N 15102019 -09-0018(0.04)հա), N 15102019 -09-0019(0.01)հա), N 15102019 -09-020(0.21 64)հա)** անտառային հողեր և **N 16052019-09-0014(0.01)հա) N 16052019-09-0022(0.01)հա)** համայնքային հողեր] և կառուցապատողի առաջադրանքի հիման վրա:

Ամբողջական ծրագրի իրականացման համար կպահանջվի այլ հողատարածքներ և լրացուցիչ ևս հինգ տարի, մասնավորապես **երկրորդ և երրորդ փուլերի** համար:

**ԱՌԱՋԻՆ ՓՈՒԼԻ** նախագծով նախատեսվում է **(N 15102019 -09-020 0.2164 հա)** հողատարածքում տեղակայել ոչ հիմնական կոնստրուկտիվ շինություն ինժեներատեխնիկական, ադմինիստրատիվ սպասարկման և հասարակական սպասարկման նպատակով **(ընդ. 160քմ) : Սանհանգույց և լոգարանը(36քմ)** իր սեպտիկ հորով **(ռուսական արտադրության Септик танк ТРИТОН-Н12.5 12600 լիտր)**, որը նույնպես պատրաստի

տեղակայվող ժամանակավոր կառույց է: Նաև մի զգալի տարածք (մոտ **500**քմ) օգտագործվելու է որպես վրանային ճամբար : Չիփլայնի վերջնակետի համար նախատեսվում է օգտագործել տարածքի(**27** քմ) միջանկյալ հատվածը, նույնպես ոչ հիմնական, տեղափոխվող երկաթ-բետոնե հիմնասյուներով և փայտյա հարթակ ծածկարանով: Մնացած ամբողջ տարածքը (**1400**քմ) կլինի պաշտպանական և սանիտարահիգիենիկ նշանակության ռեկրեացիոն գոտի համաձայն ՀՀ կառավարության **N 108**-ն որոշման: Ծառերի տեսականին ճեմելիքների համար կլինեն մրգատու (նշենի սովորական(**A mygdalus communis L.**), սերկևիլենի սովորական(**Cydonia oblonga Mill.**), կեռասենի(**Cerasus avium Moench.**), ընկուզենի սովորական(**Juglans regia L.**), տանձենի ուռատերև(**Pyrus salicifolia Pall.**), տանձենի կովկասյան(**Pyrus caucasica Fed.**), նոնենի(**Punica granatum L.**)) ծառերով՝ ընդհանուր **30** հատ և կզբաղեցնի ռեկրեացիոն գոտու **900**քմ տարածք:

Նախագծով նախատեսված մյուս երկու (**N151 02019-09-0018(0.04**հա), **N 15102019 -09-0019(0.01**հա)) տարածքները ծառայելու են որպես Չիփլայնի երկուսական թռիչքակետ (յուրաքանչյուրը **27**քմ) ոչ հիմնական, տեղափոխվող երկաթ-բետոնե հիմնասյուներով և փայտյա հարթակ ծածկարանով:

Նման կահավորում կունենա նաև համայնքային երկու հողերը (յուրաքանչյուրը **0.01**հա)՝ միայն Չիփլայնի համար նախատեսված թռիչքակետ: Անշարժ գույքի վկայականների (**N 16052019-09-0014(0.01**հա), **N16052019 -09-0022(0.01**հա))


Նախագիծը մշակվել է ՀՀ տարածքում գործող շինարարական նախագծային նորմերին և պահանջներին համապատասխան, հակահրդեհային, շրջակա միջավայրի պահպանման, սանիտարահիգիենիկ և սեյսմիկ նորմերի համաձայն:

Բազմաֆունքցիոնալ համալիրի կառուցման առաջին փուլի աշխատանքները ըստ նախագծի նախատեսվում է ավարտել **2021** թվականի հունիսի **1**-ին:

Հարկ է նշել, որ Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտը մշակելու պահին չեն իրականացվել ոչ մի նախապատրաստական և հողային աշխատանքները:

**Աշխատանքների իրականացման Անտառային տարածքներից լուսանկարներ և շինաշխատանքների նկարագիր**  
 Թռիչքակետ **N 1**, մոտ **40%** գառնիթափ տարածք ՎԿ. **N15102019 -09-0018(0.04**հա)

- Այս տարածքից հողային հանույթ չի առաջանալու





- Թռիչքակետ **N 3**, մոտ **50%** գառնիթափ տարածք ՎԿ. **N 15102019 -09-0019(0.01** հա)  
 Այս տարածքից հողային հանույթ չի առաջանալու



Թռիչքակետ **N 5**, ՎԿ **N 15102019 -09-020(0.216 4** հա) ըստ երևույթին տարածքը ծառայել է որպես հողաքարային հանույթի կուտակման վայր ճանապարհաշինության կամ այլ շինարարության ժամանակ:

- Հողային հանույթ – **28** մ<sup>3</sup>: Հողային և քարայի հանույթը կտեղափոխվի Համայնքապետարանի կողմից տրամադրված տեղեկանքի , Խիզուկի ոլորան**6** կոչվող տարածք (Հավելված **3**)







**1.4.2 Շինարարության օրացուցային սլանդը և կադրային ապահովումը**

Բազմաֆունքցիոնալ Էքստրենալ և ԷԿՕ զբոսաշրջության համալիրի շինարարական աշխատանքները նախատեսվում է իրականացնել երեք տարվա ընթացքում, **3** փուլերով, այդ թվում՝

**Աշխատանքների իրականացման 1-ին փուլ՝**

- Նախապատրաստական աշխատանքներ – **20** օր
- Հողային աշխատանքներ – **10** օր
- Երկաթ-բետոնե հիմնասյունի տեղակայման համար նախապատրաստական շերտի իրականացում – **5** օր
- Մինչև **-1.60** միջր հենասյուների տեղակայում և մարանավորում – **10** օր
- **0.00** միջր ծածկարանի կառուցում – **20** օր

Շինարարությունում աշխատողների ընդհանուր թիվը՝ **14** մարդ, որից

Բանվորներ **-9** մարդ

Ինժեներներ **-2** մարդ

Վարորդներ **-3** մարդ

**1.4.3 Հիմնական տեխնիկական ցուցանիշները**

Բազմաֆունքցիոնալ Էքստրեմալ և ԷԿՕ զբոսաշրջության համալիրի շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում կատարվելու են հետևյալ ծավալով հողային աշխատանքներ: ՎԿ **N15102019 -09-020(0.216 4հա)** տարածքում տեղակայվող սեպտիկ հորի (չափսը **6.866x1.555x2.120**) տեղանքից կտեղափոխվի **23** մ<sup>3</sup> և տարածքի քարերի մի մասը **5** մ<sup>3</sup> կտեղափոխվի Համայնքապետարանի կողմից տրամադրված տեղեկանքի , Խիզոյի ոլորանե կոչվող տարածք (Հավելված **3**):

Ընդհանուր՝

- Հանույթ – **28** մ<sup>3</sup>

**Շինարարության ժամանակ օգտագործվող հիմնական շինարարական տեխնիկայի, փոխադրամիջոցների ցանկը՝**

<b>Էքսկավատոր</b>	<b>-1 հատ</b>	<b>EK -18</b> կամ համարժեք տեխնիկական տվյալներով
<b>Ավտոկռունկ</b>	<b>-1 հատ</b>	<b>KC -45717K -1</b> ИВАНОВЕЦ
<b>Բեռնատար</b>	<b>-1 հատ</b>	<b>Kamaz-55102</b> կամ համարժեք տեխնիկական տվյալներով

Շինարարական տեխնիկան կայանման խնդիր չունի, քանի որ տեխնիկայի աշխատանքը յուրաքանչյուր թոփքակետում տևելու է երկու ժամ էքսկավատորի համար և երկու ժամ ավտոկռունկի ու բեռնատարի համար: Սեպտիկ հորի (Հավելված **5**) տեղանքի փորման և քարերի հեռացման համար կպահանջվի էքսկավատորի և բեռնատարի մեկ օրվա աշխատանք:

Շինարարական տեխնիկայի համար համապատասխան վառելիքի լիցքավորումը և յուղումը անհրաժեշտություն է, որն իրականացվելու է շինհրապարակից դուրս համայնքի լցակայաններում և սպասարկման կետերում :

**1.4.4 Նյութերի և քնարեսուրսների օգտագործում**

Շինարարության ժամանակ օգտագործվող նյութերը կրելվի տարածք չափսերով պատրաստ վիճակում և կտեղակայվի: Բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ տարածքների ջրցանի, հողի/գրունտի խոնավացման համար՝ և շինանձնակազմի խմելու կենցաղային նպատակների համար:

**Շինանձնակազմի կենցաղային և տնտեսական ջրածախսը որոշվում է հետևյալ բանաձևով՝**

$$W_{\text{խս}} = (n \times N + n_1 \times N_1) \times T, \text{ որտեղ}$$

**n** – ԻՏ աշխատողների, ծառայողների թվաքանակն է՝ **5** մարդ

**N**– ԻՏԱ ջրածախսի նորմատիվն է՝ **0.016** մ<sup>3</sup>օր/մարդ

**n<sub>1</sub>**– սպասարկող աշխատողների թվաքանակն է՝ **9** մարդ

$N_1$  – սպասարկողների ջրածախսի նորմատիվն է՝ **0.025** մ<sup>3</sup>օր/մարդ

$T$  – աշխատանքային օրերի թիվն է՝ **55** օր

$W_{\text{խ.տ.}} = (5 \times 0.016 + 9 \times 0.025) \times 55 = 16.775$  մ<sup>3</sup>/շինարարության ժամանակ կամ **0.305**մ<sup>3</sup>/օր:

## 1.5 Ծահագործման փուլ

### 1.5.1 Ջրամատակարարում և ջրահեռացում

Ջրամատակարարումը կատարվելու է համաձայն ՀՀ Սյունիքի մարզ Տաթև համայնքապետարան կողմից տրամադրված տեղեկանքի պայմաններին համապատասխան [Հավելված **6**], գոյություն ունեցող ջրատարից, որը սնուցում է համայնքը: Կոյուղին միացվելու է անջրաթափանց սեպտիկ հորին (ռուսական արտադրության **Септик танк ТРИТОН-Н12.5 12600** լիտր), որն իր հերթին սպասարկվելու է «Վեոլիա ջուր» ՓԲ ընկերության կողմից: Անջրաթափանց արտաքնոցային հորի չափսերն են **6.866x1.555x2.120**: Երեք ամիսը մեկ կամ ավելի շուտ, կախված լցվելու հաճախականությունից, սեպտիկ հորից կենցաղային կեղտաջրերը հատուկ մեքենաներով կհեռացվեն դեպի կոյուղու ցանց:

### 1.5.2 Էլեկտրամատակարարում

Մատակարարվելու է «Հայաստանի Էլեկտրական Ցանցեր» ՓԲ ընկերության կողմից, Ծինուհայրե **220/110/35/6** ենթակայանից սնուցվող՝, Հարժիսե, Հալիձորե ՕԳ-ի **6**ԿՎ ճյուղավորման մոտակա հենասյունից **6** ԿՎ ՕԳ-ով էլեկտրգիա, տեղադրելով **1\*100** ԿՎԱ հզորությամբ **LSB-ի 0,4** կվ վահանակից [Հավելված **4**]:

## 2. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՌԻԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ ԾՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՍԽԵՄԱՆ

### 2.1 Ֆիզիկաաշխարհագրական պայմանները


Բազմաֆունքիոնալ Էքստրենալ և ԷԿՕ զբոսաշրջության համալիրը նախատեսվում է կառուցել ՀՀ Սյունիքի մարզ, Տաթև համայնք, գյուղ Տաթևի վարչական տարածքի թվով հինգ վարձակալված տարածքներում, որոնցից երեքը գտնվելով Որոտան գետի ձախ կողմում անտառային հողեր են, իսկ երկուսը գտնվելով Որոտան գետի աջ կողմում համայնքային հողեր են, գործառնական այլ հողատեսք: Ստորև տեղադրված գրաֆիկական քարտեզում ակնհայտ պատկերված է:


Տաթև գյուղը գտնվում է Հայաստանի Սյունիքի մարզում, Տաթև համայնքում և և և և, մարզկենտրոնից **60** կմ հյուսիս, Որոտան գետի աջ կողմում: Տաթևի շրջակայքում կան գյուղատեղիներ, եկեղեցիներ, հին գերեզմանոցներ: Այստեղ է գտնվում նաև Հայաստանի բնության հրաշալիքներից մեկը՝, Մատանի կամուրջը:

Բազմաֆունքիոնալ Էքստրենալ և ԷԿՕ զբոսաշրջության համալիրը գործարկվելու է Որոտան գետի ձախ կողմում, գետից ամենամոտ կետը **130** մետր հեռավորություն ունի և **50** մետր բարձրություն: Գետը լինելով ամենամոտ ջրային ռեսուրսը, անվերապահորեն պետք է պահպանվի գետի աղտոտման բացառմանն ուղղված ցանկացած միջոցառում: Ծինարարության և շահագործման փուլում մակերևութային ջրերի վրա ոչ մի բացասական ներգործություն չի լինի, քանի որ հեռավորությունը ակնհայտ բավարար հիմնավորում է: Ելնելով Չիփլայնի անվտանգության կանոնակարգից՝ հաճախորդի գրպաններն ու ձեռքերը պետք է դատարկ լինի: Միայն Չիփլայնի համար նախատեսված թռիչքակետերը կլինեն Որոտան գետի աջ և ձախ կողմերում, աջից-ձախ ձախից-աջ թռիչքային սկզբունքով: Ճոպանները գետից բարձր կլինեն **50-ից 110** մետրի վրա, կախված թռիչքակետերից: Տաթև վանական համալիրից ամենամոտ հիմնակետը **1300** մետր հեռու է: «Տաթևի անապատ»

համալիրից **400** մետր հեռու է: , Եկեղեցի Ցակուտե բլուրից ամենամոտ թռիչքակետը **65** մետր է, իսկ վրանային ճամբարի ամենամոտ կետը **36** մետր: , Սատանի կամուրջից **125** մետր հեռավորության վրա է ամենամոտ տարածքը: , Տաթևերե ճոպանուղուց **260** մետր ցածրով է անցնում Չիփլայնի ամենաբարձր ճոպանը: Գլխավոր ճանապարհից **(H-45) 6** մետր հեռավորություն ունի տարածքների սահմանագիծը:

Շինարարության և շահագործման փուլում մակերևութային ջրերի ու պատմամշակութային արժեքների վրա ոչ մի բացասական ներգործություն չի լինի, քանի որ հեռավորությունը ակնհայտ բավարար հիմնավորում է: Ելնելով Չիփլայնի անվտանգության կանոնակարգից՝ հաճախորդի գրպաններն ու ձեռքերը պետք է դատարկ լինի:





ՀՀ կառավարության **26.06.2009** թվականի „ Տաթև **Ե** զբոսաշրջային կենտրոն հայտարարելու մասին **N 848**-Ն որոշմամբ , Տաթև **Ե** վանական համալիրը և հարակից՝ ՀՀ Սյունիքի մարզի Խոտի, Ծինուհայրի, Հալիձորի, Տաթևի, Սվարանցի, Տանձատափի, Աղվանիի և Բարձրավանի գյուղական համայնքները հայտարարվել է զբոսաշրջային կենտրոն: Նույն որոշմամբ հաստատվել են , Տաթև **Ե** զբոսաշրջային կենտրոնի զարգացման ծրագրի հայեցակարգային նպատակները և գերակա խնդիրները:

Տեղանքի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են միջին- վերին եոցենի պլագիոկլազային, եղջերաքարային, նշաքարային բազալտներ /պալեո տեսակը/, որոնք կազմում են Կապուտջուղի հատվածքը: Այնուհետև գալիս են ստորին- միջին պլիոցենի դոլորիտները, անդեզիտները կլինոպիրոքսենային բազալտները և անդեզիտները **200**մ ընդհանուր հզորությամբ, որոնք տրանսգրեսիվ ծածկում են նախորդ հաստվածքին: Այնուհետև գալիս են դոլորիտները, անդեզիտները, լիպարիտները, ազլոմերատային լիպարիտները, թթու կազմի տուֆերը, նշաքարային անդեզիտոբազալտները, անդեզիտները և դացիտները:

Տարածքը մտնում է Չանգեզուրի ֆիզիկաաշխարհագրական շրջանի ծալքաբեկորային լեռնաշղթաների ենթաշրջանի մեջ և բնութագրվում է տիպիկ լեռնային, խոր գետահովիտներով, կտրտված ռելիեֆով: Այստեղ գերակշռող է հանդիսանում ռելիեֆի ծալքավոր կառուցվածքային տիպը: Այն արդյունք է ալպիական լեռնակազմության ժամանակաշրջանում ծալքավոր կառուցվածքների, որոնք նորագույն տեկտոնական շարժումների ընթացքում ենթարկվել են տրոհման տարբերակված շարժումների ազդեցության և բարդացել հետագա արտածին պրոցեսների ներգործությամբ:

Գործիսի տարածաշրջանը լեռնային է, կտրտված ռելիեֆով և ունի **2200-2800**մ բացարձակ բարձրություն: Հարավից սահմանափակված է Բարգուշատի, իսկ հյուսիս-արևմուտքից՝ Չանգեզուրի լեռնաշղթայով, որն ունի միջօրեականի ուղղվածություն: Մորֆոլոգիական տեսակետից շրջանը բաժանված է բարձրադիր լեռնային և լեռնահարթավայրային տարածքների:

Չանգեզուրի լեռնաշղթան **140**կմ երկարությամբ ձգվում է Ամուլսարից մինչև Մեղրու կիրճը: Նրանից ճյուղավորվում և դեպի արևելք են տարածվում Բարգուշատի և Մեղրու լեռնաբազուկները:

Տարածքի երկրաբանական կառուցվածքին մասնակցում են վերին պլիոցենից մինչև ժամանակակից հասակի նստվածքների համախմբեր, որոնք հիմնականում ներկայացված են հրաբխային, հրաբխա-նստվածքային ֆացիաներով:

Ժամանակակից ռելիեֆի ձևավորման պատմությունը սկսվում է վերին պլիոցենի ժամանակներից, երբ միոցենի նստվածքների հողմնահարված, էրոզիոն-դենուդացիոն մակերեսին սկսվել են տեղադրվել վերին պլիոցենի հասակի հրաբխային ապարներ, ինչպես նաև չորրորդական և ժամանակակից առաջացումներ:


## 2.2 Բուսական աշխարհ

Հայաստանի բնակչության բարեկեցությունը մեծապես կախված է կենսաբանական պաշարների առկայությունից, որոնք երկրի համար հանդիսանում են ռազմավարական ռեսուրսներ:

Կամայական գործունեության իրականացման ընթացքում հնարավոր ազդեցությունը կրող կենսաբազմազանության և էկոհամակարգերի մասին տվյալները հավաքագրվել և մշակվել են հիմնվելով կենսաբազմազանության վերաբերյալ ՀՀ-ում գերծող օրենքներից, ՀՀ-ի կողմից ստորագրված համապատասխան միջազգային կոնվենցիաներից և պայմանագրերից: Հավաքվել և վերլուծվել է ֆլորայի և ֆաունայի վերաբերյալ տվյալ շրջանին վերաբերող համարյա ամբողջ գիտական տեղեկատվությունը: Որից հետո համապատասխան մասնագետների կողմից իրականացվել է այցելություն ուսումնասիրվող տարածքներ ֆլորայի և ֆաունայի արդի վիճակը գնահատելու համար: Հատուկ ուշադրություն է դարձվել տվյալ շրջանին բնորոշ ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում գրանցված բույսատեսակների և կենդանատեսակների առկայությանը:


Հայաստանի տարածքում առանձնացվում է **12** ֆլորիստիկ շրջաններ: Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է Չանգեզուրի ֆլորիստիկ շրջանում (Հայաստանի Հանրապետության ֆլորիստիկ շրջանները ըստ ակադեմիկոս Ա.Լ. Թախտաջյանի (1954)) և գրավում է անտառային ցածր միջինլեռնային (**800-2300** մ ծ.մ.), մերձալպիան բարձրալեռնային (**2400-2800** մ ծ. մ.) լանշաֆտային գոտիները, որով և պայմանավորվում է տարածաշրջանի կենսաբազմազանությունը:





Նկար 1. Հայաստանի Հանրապետության ֆլորիստիկ շրջանները ըստ ակադեմիկոս Ա.Լ. Թախտաջյանի (1954)

Չանգեզուրի ֆլորիստիկ շրջանը Հայաստանում առաջինն է բուսատեսակների թվով, որոնց թիվը **2000** է : Ֆլորիստիկ շրջանի բարձրունքային սահմանները գտնվում է **(600 – 3900** մ ծ.մ.): Բուսականության հիմնական տիպերն են՝ կիսանապատային, անտառային, տափաստանային, մարգագետնային և նոսրանտառային, մերձալպյան և արլյան մարգագետիններ: Էնդեմիկ բույսերի քանակը՝ **41** է, Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների թիվը՝ **95** է, ըստ **Լ.** Կենսաբանական բազմազանության մասին կոնվենցիա,, ՀՀ հինգերորդ ազգային զեկույցից, **2014** թ):



**Նկար 2. Հայաստանի Հանրապետության լանդշաֆտային գոտիները**

Նախագծվող օբյեկտի տարածքներում և հարակից տարածքներում գերակշռում է լեռնատափաստանային, մերձալպյան և ալպյան բուսականությունը: Տափաստանային բուսականության զարգացումը տարվա ընթացքում ունի արտահայտված ֆազայնություն: Գարնան ֆազայում բուռն և առատ ձևով զարգանում են վաղանցիկ բուսականության տեսակները: Այդ ընթացքում բազմամյա բույսերի վեգետացիան դեռ նոր է սկսվում: Ամռան սկզբին տափաստանները ծածկվում են յոթազգիների և տարախոտների տեսակների խայտարդետ ծաղիկներով: Սակայն ամռան վերջում և աշնան սկզբում տափաստանային բուսականության մեծ մասը կազմում են ճիմ առատ հատիկաբույսերը: Ուշ աշնան ֆազայում տափաստանային հատվածներում հանդիպում են ծաղկած հացազգիների եզակի ներկայացուցիչներ: Գերիշխողը այստեղ խոտաբույսերն են՝ տեղ-տեղ գազային տարրերով հացազգի բուսականությունը փոփոխվում է կախված տափաստանի տեսակից: Դիտարկված սիզախոտային, կծմախոտային, շյուղախոտային տափաստանային անցումները: Ոչ մեծ տարածքներում հանդիպում է կծմախոտային և այլ տափաստանային

տեղամասեր: Այս տիպի տափաստանային գոտիներին բնորոշ է կծմախոտ **/Andropogon/schaeumum/** խոտաբույսը, որը ծաղկում է ամառվա կեսին կամ վերջին, և այդ շրջանում ամբողջ տարածքը ծածկվում է մանուշակագույն երանգով: Արդեն աշնան սկզբին կծմախոտի արդեն չորացած ցողունները տարածքին տալիս են ծղոտադեղնագույն երանգ: Առավել խոնավ տարիներին շատ լավ է զարգանում տարածքի ամենաբնորոշ բուսատեսակը՝ անդրոպոգոնը **/Andropogon/**: Տարածքի հիմնական բուսատեսակներն են. ագրիտոտուկը **(A gropyrumtrichophorum)**, դաշտավլուկ սոխուկավոր **(Poa bulbosa L.)**, ճիլը և այլն:

Տաթև համայնքի տարածքում աճում են չ՛ բույսերի Կարմիր գրքում գրանցված վարդակակաչ Մոսնովսկու **(Tulipa sosnovskyi Achverdov և Mi rzoeva)**, պսեֆելուս զանգեզուրի **(Psephdus zangezuri Sosn.)**, տերեփուկ լեզեանման **(Centaurea leuzeoides Jaub. և Spach) Walp.)**, Ադիանտում Վեներայի վարս **(A dianthum capillis-veneris L.)** բուսատեսակները, սակայն բուն գործունեության համար նախատեսված տարածքում դաշտային հետազոտությունների արդյունքում չ՛ բույսերի Կարմիր գրքում գրանցված տեսակներ կամ դրանց աճելավայրեր չեն հայտնաբերվել: Հարկ է նշել, որ գործունեությամբ ծառեր չեն հատվելու:

### 2.3 Հողային ռեսուրսներ

Հողային ծածկույթը ներկայացված է բաց շագանակագույն, ոչ այնքան զարգացած բնահողերով: Տարածքների բուսականությունը բազմատերևային տափաստանային է: Կլիմայական տեսակետից ուսումնասիրվող շրջանի կլիման մեղմ է՝ երկարատև տաք ամառներով և ցուրտ ձմեռներով: Հողերի քայքայամաշվածությունը **25-45%** է: Հեղեղների հաճախությունը **3 – 10** տարի(միջին հաշվով **7** տարին մեկ անգամ): Սելավային զանգվածի միջին ծավալը **5000մ3 /կմ2** , հեղեղման տիպը ջրանստվածքային  $Yp = 1100 - 1300$  կգ/ մ**3**: Հայաստանում հողի մեծ մասը, մասամբ ձևավորված հրաբխային լավայի մնացորդներից, հարուստ է ազոտով, պոտաշով և ֆոսֆատներով: Հողածածկույթը շատ բազմազան է: Կարելի է հանդիպել Մեծ Կովկասի լեռնային շրջաններում ձևավորված ամեն տեսակ գոտիական հողատիպերի: Առավել տարածված գոնատեսակներն են՝լեռնային-մարգագետնային, լեռնային-մարգագետնային-տափաստանային, լեռնային սևահող, լեռնային շագանակագույն և լեռնային դարչնագույն հողեր: Չնայած հողածածկույթին բնորոշ է ակներև ուղղահայաց գոտիականությունը, հողի բոլոր տեսակները կախված են շրջանի բարձրությունից: Հողերի երոզիան լուրջ և մեծացող խնդիր է, որն առաջացել է ագրոտեխնիկական միջոցառումների անբավարար կիրառման, գերարածեցման և չվերահսկվող անտառահատման պատճառով: Դրա ազդեցությունն է կրում գյուղատնտեսական հողերի զգալի մասը:

Համաձայն չ՛ Ազգային ատլասի և չ՛ հողերի աշխարհագրության տարածքի հողային ֆոնդը բաժանվում է հետևյալ տիպերի՝ (նկար **3**)

Անտառային դարչնագույն հողեր


Մարգագետնատափաստանային հողեր

Լեռնամարգագետնային հողեր

Անտառային դարչնագույն հողեր: Տարածվում են հիմնականում Սյունիքի մարզի **800-2400** մ բարձրություններում, բնորոշվում են կավայնացմամբ, զգալի քարքարոտությամբ, կավաավազային և կավային մեխանիկական կազմով, զգալի հումուսացվածությամբ **(30-44 մգ/էկվ)** կարբոնատների պարունակությամբ, բավարար ջրաֆիզիկական հատկություններով:

Մարգագետնատափաստանային հողեր: Տարածվում են **1800-2400**մ բարձրություններում, բնորոշվում են հումուսի համեմատաբար բարձր պարունակությամբ **(8-3 %), pH=5,5-6,8**, կլանման մեծ ծավալով, **19** միջին և ծանր կավաավազային մեխանիկական կազմով և բարենպաստ ջրաֆիզիկական հատկություններով:

Լեռնամարգագետնային հողեր: Տարածվում են **2000-2400** մ բարձրություններում, բնորոշվում են հումուսի բարձր պարունակությամբ **(13-20 %)**, թեթև մեխանիկական կազմով, փխրուն կառուցվածքով, միջինից ցածր կլանունակությամբ **(15-20 մգ/էկվ)**, **pH=4,8-5,5**, բարենպաստ ջրաֆիզիկական հատկություններով:



Նկար 3 ՀՀ հողերի տիպային քարտեզ

## 2.4 Կենդանական աշխարհ

Ներկայացված կենդանական աշխարհի ներկայացուցիչների կազմը պայմանավորված է տարածքների բնակլիմայական ցուցանիշներով և բուսական ծածկույթի տեսակներով: Կենդանիների բազմազանությունը առավել հարստանում է դրանց արտազոնալ լանդշաֆտների / ցանքեր, այգիներ, ժայռեր, քարաթափեր, բնակավայրեր և այլն/ ներկայացուցիչներով: Որոտան միկրոշրջանը մտնում է Չանգեզուր-Ղարաբաղյան ենթաշրջանի մեջ: Ողնաշարավոր կենդանիները հիմնականում բնակվում են քարքարոտ և ժայռային տարածքներում: Քարքարոտ տարածքներում առատորեն բազմանում են մկնամնան կրծողները, որոնցից տարածված են փոքր սահական գետնամուկը, լեռնային կույր մուկը, ճագարամուկը, դաշտամուկը, անտառամուկը, իսկ ժայռերի խոռոչներում բնադրում են չղջիկները: Հաճախակի կարելի է հանդիպել խլուրդների: Գոտին աչքի է ընկնում թռչունների բազմազանությամբ: Թռչուններից առավել բնորոշ են լորը, մոխրագույն կաքավը, սովորական տատրակը, մոխրագույն կռունկը: Թփուտներում բնադրում են ճնճողուկագզիներ, որոնց բնորոշ ներկայացուցիչներն են կանեփակերը, այգու դրախտապանը, դաշտային արտույտը, լեռնային սարյակը, սովորական ծղրիդը: Կան նաև գիշատիչ թռչուններ՝ ճուռակ, մկնաբազե, սևուրուր, հազվադեպ հանդիպում է նաև տափաստանային արծիվը: Տարածված են նաև ագռավը, կկուն, խաչկտուցը: Միջատակերներից տարածքի համար բնորոշ են սպիտակատամիկը և սպիտակափոր սպիտակատամիկը: Հանդիպում են նաև գիշատիչ կենդանիներ՝ սրնչակ, աղվես, գայլ, գորշուկ, հազվադեպ նաև՝ աքիս և կզաքիս: Սողուններից տարածված են տարատեսակ մողեսներ, ժայռային մասերում հանդիպում է կովկասյան ագաման, դեղնափորիկը, օձերից հանդիպում է պղնձօձը, տափաստանային իժը, առավել ժայռային մասերում նաև հայկական իժը: Գետափնյա տարածքներում հիմնականում գերակշռում է լեռնատափաստանային գետերին բնորոշ կենդանական աշխարհը, որոնց բնորոշ ներկայացուցիչներն են փոքրիկ հավիկը, կտցարը, սովորական որորը, վայրի բադը, ծովարծիվ սպիտակապոչը, սովորական ծղրիդը: Գետափնյա ջրային տարածքներում հանդիպում են նաև սովորական և ջրային լորտուները, ցածրադիր ջրային գոտիներում երկկենցաղներից տարածված են լճային գորտը, առավել բարձրադիր մասերում՝ կանաչ դողողը:

Գործունեության համար նախատեսված տարածքում ՀՀ Կարմիր գրքում գրանցված կենդանիների տեսակներ չեն հայտնաբերվել:

## 2.5 Բնության հատուկ պահպանվող տարածքներ

Հայաստանում կենսաբազմազանության պահպանումը, հիմնականում, իրականացվում է Բնության հատուկ պահպանվող տարածքներում **[ԲՀՊՏ] [պետական արգելոցներ, ազգային պարկեր, պետական արգելավայրեր, բնության հուշարձաններ]**, որտեղ կենտրոնացած է բուսական և կենդանական աշխարհի տեսակազմի մոտ **60%-ը**, ներառյալ հազվագյուտ, վտանգված, անհետացման եզրին հայտնված և էնդեմիկ տեսակների ճնշող մեծամասնությունը:



**Նկար 3. Հայաստանի բնության հատուկ պահպանվող տարածքները**

Մյունիքի մարզը, որտեղ իրականացվելու է նախատեսվող գործունեությունը, ունի ԲՀՊՏ-ների բավականաչափ զարգացած և խիտ ցանց: Մարզում առկա ԲՀՊՏ-ները ներկայացված են ստորև.

1. , Չանգեգուրն պետական արգելավայր
2. , Արևիկն ազգային պարկ
3. , Շիկահողն պետական արգելոց
4. , Գորիսի պետական արգելավայր
5. , Սև լիճն պետական արգելավայր
6. , Մոսու պուրակն պետական արգելավայր
7. , Բողաքարի պետական արգելավայր
8. , Խուստուփն պետական արգելավայր

Կառավարության 2013թ. դեկտեմբերի 19-ի N 1465-Ն որոշման համաձայն , Շիկահողն պետական արգելոց պետական ոչ առևտրային կազմակերպության և , Արևիկն ազգային պարկ պետական ոչ առևտրային կազմակերպության միաձուլման և վերակազմակերպման ձևով ստեղծվել է , Չանգեգուրն կենսոլորտային համալիր պետական ոչ առևտրային կազմակերպությունը ներառելով , Արևիկն ազգային պարկը, , Շիկահողն պետական


արգելոցը, Սոսու պուրակե, Չանգեգուրե, Խուստուլիե, Բողաքարե և Սև լիճն պետական արգելավայրերը:

Նախատեսվող գործունեության տեղանքը անմիջական սահմաններ ԲՀՊՏ-ների հետ չունի: Տեղանքին ամենամոտը գտնվում է Գորիսի պետական արգելավայրը, որի ամենամոտ սահմանը ուղիղ գծով 5կմ-ը գերազանցում է: Գորիսի արգելավայրը գտնվում է Սյունիքի մարզում՝ Խնածախ գետի հովտում՝ ծովի մակարդակից 1400-2800 մ բարձրություններում: Հիմնադրվել է 1972 թ.-ին, ունի 1850 հա տարածք: Ստեղծվել է անտառային լանդշաֆտների և կենդանական աշխարհի պահպանության նպատակով:

Նախատեսվող գործունեության տեղանքին մոտ գտնվող բնության հուշարձանների անվանումն ու տեղադիրքը բերված են աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1


N	Անվանումը (նկարագիրը)	Տեղադիրքը
1.	, Սատանի կամուրջ	Սյունիքի մարզ, Տաթև գյուղից 2,5 կմ հս-արլ
2.	, Անանունե սյունաձև բազալտներ	Սյունիքի մարզ, Հալիձոր գյուղից 2 կմ արմ, Որոտանի կիրճում
3.	, Շինուհայրե ջրվեժ	Սյունիքի մարզ, Որոտան գետի ձախ կողմում, Հին Շինուհայրից 0.5 կմ հս-արմ
4.	, Ջրաղացին աղբյուր	Սյունիքի մարզ, Բարձրավան գյուղից 0.5 կմ հս-արմ, ծ.մ-ից 1350 մ բարձրության վրա
5.	, Սպիտակջուրե աղբյուր	Սյունիքի մարզ, Տանձատափ գյուղից 1.4 կմ հվ, անանուն գետակի ձախ սփին, ծ.մ-ից 1480 մ բարձրության վրա



Նկար 4. Հայաստանի բնության հուշարձանները

«Տյունիքի մարզը զբաղեցնում է Չանգեզուր բնաշխարհի տարածքը, որը ներառում է Որոտան, Ողջի գետերի վերին ու միջին հոսանքների ավազանը և Չանգեզուրի՝ Մեծ Կովկասից հետո Անդրկովկասում ամենաբարձր լեռնաշղթայի, արևելյան լանջերը: Մարզի ամենաբարձր լեռնագագաթը Կապուտջուղն է (3 906 մ), իսկ ամենացածր վայրը՝ Մեղրու կիրճը (Արաքսի հովիտ 380մ): Կապան քաղաքից հարավ-արևելք՝ Ճավ գետի ավազանում է գտնվում բնական սուսինների ռեիկտային պուրակը, որը զբաղեցնում է գրեթե 120 հա, մակերեսով 2-րդն է աշխարհում: Այդ եզակի պուրակի որոշ ծառերի տարիքն անցնում է մի քանի հարյուր տարուց, տրամագիծը հասնում է 3 մ-ի, իսկ բարձրությունը՝ 30-35 մ-ի:

Համաձայն «Ազգային ատլասի ջրատեղագրաբանական քարտեզի տարածքում գրունտային ջրերը բացակայում են (նկար 4)



Նկար 4. Ջրատեղագրաբանական քարտեզ

Մարզի ամենագրավիչ վայրերից մեկը, հայկական միջնադարյան ճարտարապետության հուշարձան՝ Տաթևի վանական համալիրն է (IX դար), որտեղ 1390-1435 թթ. գործել է Տաթևի նշանավոր համալսարանը: 2010թ.-ին շահագործման է հանձնվել 5.7 կմ երկարությամբ աշխարհի ամենաերկար , Տաթևերե նոպանուղին (առավելագույն բարձրությունը 380 մ), որն անցնում է Որոտան գետի կիրճով, ձգվում սարերի վրայով և Հալիձոր գյուղից հասնում Տաթևի վանական համալիր: Որոտանի կիրճում են գտնվում Տաթևի ՀԷԿ-ը՝ Որոտանի ՀԷԿ-երի կասկադի առաջնեկը և Շամբի ջրամբարը, որտեղից 18 կմ երկարությամբ թունելով ջուրը հասնում է Տաթևի ՀԷԿ-ի տուրբիններին: 2012թ.



գործարկվեց Հին Խնձորեսկի երկու ձորափը **Ղանդունցնովնու Ներքին թաղը** իրար միացնող իր տեսակի ու չափի մեջ եզակի կախովի կամուրջը: Կամուրջը հսկա ձորի մի ափից մյուսը ձգվում է ավելի քան **160** մետր: Բարձրությունն ամենախոր տեղում **63** մ է: Մարզի պատմամշակութային հուշարձանների մեջ հայտնիներից են Բաղաբերդի, Հալիձորի, Որոտնա բերդի ամրոցները, Տաթևի, Որոտնա, Բղենուվանքերը, Վահանավանքի և Երիցվանքի վանական համալիրները, Աղիտուի դամբարանային հուշարձանը, Միսիանի նեոլիթի ժամանակաշրջանի դամբարանաբլուրը, Մեղրի քաղաքի փոքր թաղի եկեղեցին և քաղաքի պաշտպանական նշանակության Միսիան քաղաքից **3.2** կմ դեպի հյուսիս գտնվում է , Չորացքարեր**ն** հուշարձանախումբը, որը հայտնի է նաև Քարահունջ անունով: Այն մեզալիթյան դարաշրջանի **Լ.ա. II** հազարամյակ**ը** ծնունդ է:

ՀՀ Սյունիքի մարզը, գրավելով ռազմավարական և աշխարհաքաղաքական նշանակության կարևոր դիրք, ունենալով բնահումքային հարուստ պաշարներ, արտադրական մեծ ներուժ և հանդիսանալով հանրապետության ամենախոշոր վարչական ու տնտեսական մարզերից մեկը, միաժամանակ մնում է համեմատաբար քիչ բնակեցված և տնտեսապես թույլ յուրացված, ինչը մասամբ պայմանավորված է մայրաքաղաքից ունեցած մեծ հեռավորությամբ և տրանսպորտային հաղորդակցության այլընտրանքային միջոցների բացակայությամբ: Օգտակար հանածոներով ամենահարուստ մարզն է: Դրանցից կարևորագույններն են՝ գունավոր **Աղինձ, մոլիբդեն, ցինկ և այլ գունավոր** և թանկարժեք **Ռոսկի, արծաթ** մետաղների հանքաքարերը, ինչպես նաև ոչ մետաղային օգտակար հանածոների մի ամբողջ շարք **Շինարարական և երեսապատման քարեր, բազալտային հումք, կրաքարի և այրվող թերթաքարերի, մարմարի, գրանիտի պերլիտի և դիատոմիտների պաշարներ**: Մարզի տնտեսության ընդհանուր ծավալում գերակշռողը արդյունաբերության և գյուղատնտեսության ճյուղերն են: **2013**թ.-ին, մարզի տնտեսության հիմնական հատվածների տեսակարար կշիռները ՀՀ համապատասխան ճյուղերի ընդհանուր ծավալում կազմել են.

- արդյունաբերություն՝ **16.5%**,
- գյուղատնտեսություն **6.8%**,
- շինարարություն՝ **5.4 %**,
- մանրածախ առևտուր՝ **1.4 %**,
- ծառայություններ՝ **1.3 %**:

Մարզի արդյունաբերության հիմնական ճյուղը հանքարդյունաբերությունն է և էլեկտրաէներգիայի արտադրությունը: Մարզում արտադրվող էլեկտրաէներգիայի գերակշիռ մասը բաժին է ընկնում Որոտանի ՀԷԿ-ի կասկադին: Գյուղատնտեսությունը հիմնականում մասնագիտացած է բուսաբուծության **մասնավորապես՝ հացահատիկային մշակաբույսերի և կարտոֆիլի արտադրություն** և անասնաբուծության **մասնավորապես՝ խոշոր եղջերավոր անասունների բուծում** մեջ: Բեռնաուղևորափոխադրումները մարզում իրականացվում են ավտոմոբիլային և էլեկտրատրանսպորտով **ճոպանուղի**: Մարզի տարածքով է անցնում Հայաստանն Իրանի հետ կապող ավտոմայրուղին, որն էական դեր ունի մարզի տնտեսության զարգացման գործում: Մարզով են անցնում Արցախը Հայաստանին կապող կարևոր ավտոմայրուղին և Իրանի Իսլամական Հանրապետությունը ցամաքային անմիջական կապով Հայաստանին կապող միակ ճանապարհը:

Սոցիալ-տնտեսական հնարավորությունների տեսանկյունից Երևան քաղաքի և հեռավոր գյուղական բնակավայրերի միջև տարբերությունը խիստ մեծ է:

Հայաստանի հարավ-արևելյան շրջաններից աղքատության ավելի ցածր մակարդակ ունի Սյունիքի մարզը:

Աշխատողների աշխատավարձերը ավելի բարձր են Սյունիքի մարզում, քան այլ մարզերում: Սա պայմանավորված է քաղաքային բնակչության բարձր տոկոսով Սյունիքում, և Իրանի, ինչպես նաև առևտրի հիմնական ուղու մոտիկությամբ:

Այս մարզի բնակչությունը գրեթե բացառապես զբաղվում է գյուղատնտեսական գործունեությամբ, հատկապես ոչխարաբուծությամբ և խոշոր եղջերավոր անասունների բուծմամբ:

Ներկայացվող գործունեության մերձակայքում գտնվում է Տաթև Համայնքը, որի մասին տեղեկատվությունը բերված է ՀՀ Սյունիքի մարզպետարանի պաշտոնական կայքից.

Բնակչություն՝ **1042**

Համայնքի կենտրոնի **ռեռավորությունը** մարզկենտրոնից՝ **60** կմ,

Համայնքի կենտրոնի **ռեռավորությունը** Գորիս քաղաքից՝ **36** կմ,

Համայնքի կենտրոնի բարձրությունը ծովի մակերևույթից՝ **1610** մ,

Համայնքի կարգավիճակը՝ լեռնային,

Համայնքի վարչական տարածքում ընդգրկված բնակավայրերը՝ գ. Խոտ, գ. Շինուհայր, գ. Հալիձոր, գ. Տաթև, գ. Սվարանց, գ. Տանձատափ, գ. Աղվանի և գ. Բարձրավան:

## 2.6 Կլիման

Երկրաբանական և երկրամորֆոլոգիական բարդ կառուցվածքը պայմանավորում է տարածքի լանդշաֆտային, աշխարհագրական կազմությունը՝ ձևավորված լեռնային մայրցամաքային եղանակի պայմաններում: Ներկայացվող բազմաֆունքցիոնալ Էքստրեմալ և ԷԿՕ զբոսաշրջության համալիրը նախատեսվում է Որոտան գետի, լեռնային խիստ կտրտված տեղանքում: Ռելիեֆի բարդությունը և ավազանը եզերող լեռնաշղթաների առկայությունը, ձևավորել են առանձնահատուկ կլիմայական պայմաններ զանազան գոտիների համար, կախված նրանց բացարձակ նիշերից: Կլիմայական տեսակետից ուսումնասիրվող շրջանի կլիման բնորոշվում է՝ երկարատև տաք ամառներով և ցուրտ ձմեռներով:

Լեռնային շրջանի ջերմաստիճանը շատ բազմազան է և կախված է ծովի մակարդակից տեղանքի բարձրությամբ, ռելիեֆի ձևից, լանջի դիրքից և այլն: Օդի միջին տարեկան ջերմաստիճանը **3.3°C** է, հունվարին՝ **-9.8°C**, ապրիլին՝ **1.5°C**, հուլիսին՝ **14.3°C**, հոկտեմբերին՝ **5.5°C**: Չերմաստիճանի տարեկան ամպլիտուդն **24.8°C** է: Բացարձակ նվազագույնը - (**-43°C**) է և դիտվել է հունվարին: Բացարձակ առավելագույն ջերմաստիճանը **31°C** է և դիտվել է օգոստոսին: Հողի սառչելու առավելագույն խորությունը հաշվարկային գետահատվածքում **60** սմ է: Բացարձակ խոնավությունը **6.4** մմ է, իսկ հարաբերականը՝ **67%**: Տարվա ընթացքում թափվում են **494** մմ տեղումներ, որից **273** մմ թափվում է տարվա տաք ժամանակահատվածում: Չյան տեսքով թափվող տեղումների քանակությունը **171** մմ է: Կայուն ձյունածածկ հաստատվում է դեկտեմբերին: Ձնհալը սկսվում է մարտին: Տարվա ընթացքում գերակշռում են արևելյան ուղղությամբ փչող քամիները, որոնց միջին արագությունը հավասար է **1.6** մ/վ սահմաններում:

Օդի միջին ջերմաստիճանը, °C

Աղյուսակ 2.1.

Միջին ջերմաստիճանը ըստ ամիսների												միջին տարեկան
I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	
-9.8	-5.9	0.3	1.5	6.4	12.6	14.3	18.2	10.5	5.5	0.4	-8.2	4.5

Օդի հարաբերական խոնավության բնութագիրը ըստ մետեոկայանի տվյալների բերված է աղյուսակ 2.2-ում:

Օդի հարաբերական խոնավությունը, %

Աղյուսակ 2.2.

Միջինը ըստ ամիսների, %												միջին տարեկան
I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	
78	73	63	55	55	49	45	44	49	60	72	78	60

Տեղումների բնութագիրը ըստ Սյունիքի մարզային հիդրոօդերևութաբանական ծառայության տվյալների բերված է աղյուսակ 2.3-ում: Կլիման բնութագրվում է տեղումների ցածր քանակով: Տեղումների միջին տարեկան նորման չի գերազանցում **494** մմ: Շրջակայքում գոյորշիացման էներգետիկական հնարավորությունները զգալիորեն գերազանցում են տեղումների քանակը, այդ պատճառով կլիման չոր է:

Ձյան ծածկույթի առավելագույն դեկադային բարձրությունը կազմում է **58** սմ, ճնշումը – **70 կգ/մ<sup>2</sup>**: Գրունտի սառչման առավելագույն խորությունը կազմում է **60** սմ: Ձյան ծածկույթով օրերի միջին քանակը կազմում է **68**: Հաստատուն ծածկույթը գոյանում է ոչ ամեն տարի:

Տեղումների բնութագիրը

Աղյուսակ 2.3.

Տեղումների քանակը _____ միջին _____, մմ												տարեկան
մաքսիմալ օրական												
I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	
<u>34</u>	<u>31</u>	<u>32</u>	<u>43</u>	<u>52</u>	<u>27</u>	<u>18</u>	<u>10</u>	<u>23</u>	<u>31</u>	<u>38</u>	<u>32</u>	<u>371</u>
21	23	34	29	42	31	29	26	51	35	36	28	51

Քամու նվազագույն միջին արագությունը հուլիս ամսին, որի կրկնվողությունը հասնում է **16** տոկոս, կազմում է **7.2** մ/վրկ: Քամու բացարձակ առավելագույն արագությունը **20** տարի մեկ անգամ հասնում է **24** մ/վրկ: Նորմատիվ հողմաբեռնվածքը կազմում է **45 կգ/մ<sup>2</sup>**:

Քամու ակտիվությունը ռեգիոնում բերված է աղյուսակ 2.4-ում:

Քամու բնութագիրը

Աղյուսակ 2.4.

Ամիս	քանու կրկնվողությունն ըստ ուղղությունների և անդորրի, %								
	քանու միջին արագությունը, մ/վրկ								
	Հս	ՀսԱրլ	Արլ	ՀվԱրլ	Հվ	ՀվԱրմ	Արմ	ՀսԱրմ	Անդորր
<b>I</b>	<b>3</b>	<b>10</b>	<b>13</b>	<b>16</b>	<b>20</b>	<b>26</b>	<b>9</b>	<b>3</b>	<b>78</b>
	<b>2.0</b>	<b>2.1</b>	<b>2.2</b>	<b>2.8</b>	<b>2.6</b>	<b>2.3</b>	<b>2.7</b>	<b>3.4</b>	
<b>IV</b>	<b>7</b>	<b>14</b>	<b>8</b>	<b>18</b>	<b>18</b>	<b>16</b>	<b>13</b>	<b>6</b>	<b>50</b>
	<b>3.1</b>	<b>2.9</b>	<b>2.4</b>	<b>3.5</b>	<b>3.0</b>	<b>3.0</b>	<b>4.1</b>	<b>3.4</b>	
<b>V II</b>	<b>17</b>	<b>31</b>	<b>3</b>	<b>9</b>	<b>16</b>	<b>13</b>	<b>7</b>	<b>4</b>	<b>40</b>
	<b>5.5</b>	<b>5.9</b>	<b>2.2</b>	<b>2.4</b>	<b>2.1</b>	<b>2.5</b>	<b>2.7</b>	<b>4.6</b>	
<b>X</b>	<b>5</b>	<b>18</b>	<b>10</b>	<b>11</b>	<b>19</b>	<b>22</b>	<b>10</b>	<b>5</b>	<b>70</b>
	<b>2.7</b>	<b>2.3</b>	<b>1.8</b>	<b>2.5</b>	<b>2.2</b>	<b>2.2</b>	<b>2.8</b>	<b>3.7</b>	

Արեգակնային փայլի տևողության, ճառագայթման ուժգնության բնութագիրը և ամպամած օրերի քանակը բերված են **2.5 – 2.7** աղյուսակներում:

**Արեգակնային ճառագայթում**

Աղյուսակ 2.5.

Գումարային ճառագայթում [ուղիղ + ցրված], որը մուտք է գործում հորիզոնական մակերևույթ անամպ երկինքի դեպքում, ՄՁ/մ <sup>2</sup>												միջին տարեկան
<b>I</b>	<b>II</b>	<b>III</b>	<b>IV</b>	<b>V</b>	<b>VI</b>	<b>V II</b>	<b>V III</b>	<b>IX</b>	<b>X</b>	<b>XI</b>	<b>X II</b>	
<b>264</b>	<b>423</b>	<b>586</b>	<b>804</b>	<b>1043</b>	<b>1182</b>	<b>106</b>	<b>104</b>	<b>842</b>	<b>620</b>	<b>339</b>	<b>214</b>	700
						<b>8</b>	<b>7</b>					

**Արեգակնային փայլի տևողությունը**

Աղյուսակ 2.6.

Տևողությունը ըստ ամիսների, ժամ												Տարեկան
<b>I</b>	<b>II</b>	<b>III</b>	<b>IV</b>	<b>V</b>	<b>VI</b>	<b>V II</b>	<b>V III</b>	<b>IX</b>	<b>X</b>	<b>XI</b>	<b>X II</b>	
<b>89</b>	<b>118</b>	<b>169</b>	<b>212</b>	<b>283</b>	<b>334</b>	<b>359</b>	<b>352</b>	<b>300</b>	<b>246</b>	<b>144</b>	<b>90</b>	2696

**Ամպամած օրերի քանակը**

Աղյուսակ 2.7.

Ըստ ամիսների, օր												Տարեկան
<b>I</b>	<b>II</b>	<b>III</b>	<b>IV</b>	<b>V</b>	<b>VI</b>	<b>V II</b>	<b>V III</b>	<b>IX</b>	<b>X</b>	<b>XI</b>	<b>X II</b>	
<b>10</b>	<b>6</b>	<b>4</b>	<b>2</b>	<b>0.2</b>	<b>0.1</b>	<b>0</b>	<b>0.1</b>	<b>0.3</b>	<b>1</b>	<b>4</b>	<b>11</b>	39

Տարվա հաշվարկային կլիմայական պարամետրերը բերված են **2.8 – 2.9** աղյուսակներում:

Կլիմայական բնույթագիրը տարվա ցուրտ ժամանակահատվածում

Աղյուսակ 2.8.

Օդի ջերմաստիճանը, °C										Ամենացուրտ ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %		Մթնոլորտային տեղումներ և գրունտի սառչման խորությունը		Քամի	
ամենա ցուրտ օրվա		ամենա ցուրտ հինգօրյակի		ամենացուրտ ժամանակահատվածում	բացարձակ նվազագույնը	ամենացուրտ ամսվա միջին օրակյան ամալիտուրա	Տևողությունը [օր]								
Ապահովվածություն							միջինը ամենացուրտ ժամանակահատվածում	-	8	ժամանակահատվածում, երբ միջին օրական ջերմաստիճանը ոչ ավելի քան՝					
0	8	10	0	8	10	միջին ամսական				միջին ամսական ժամը 15-ին	տեղումների քանակը նոյեմբեր-մարտ ամիսներին, մմ	գրունտի սառչման առավելագույն խորությունը, սմ	գերակշռող ուղորդվածությունը դեկտեմբեր-փետրվար ամիսներին	հուլիսից սեպտեմբերի միջին արագությունները, ըստ առավելագույնը, ըստ ումբրերի, մ/վրկ	
0.98	0.92	0.98	0.92	-3.6	-	8.3	70	140	159	78	68	132	60	<4	2.6
-21	-19	-19	-17	-3.6	2	8.3	-2.4	1.0	1.8						

Կլիմայական պարամետրերը տարվա տաք ժամանակահատվածում

Աղյուսակ 2.9.

Օդի ջերմաստիճանը, °C					Ամենատաք ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %	Մթնոլորտային տեղումներ, մմ		Քամի		
Ապահովվածություն		Միջին ամսական ջերմաստիճանը	Միջին ամսական ջերմաստիճանը	Միջին ամսական ջերմաստիճանը						
0.95	0.99				բացարձակ առավելագույնը	ամենատաք ամսվա միջին առավելագույնը	ամենատաք ամսվա միջին օրական ցրտի սահմանը	միջին ամսական	միջին ամսական ժամը 15-ին	տեղումների քանակը ապրիլ-հոկտեմբեր ամիսներին
<b>32</b>	<b>34</b>	<b>42</b>	<b>33</b>	<b>15.6</b>	<b>45</b>	<b>28</b>	<b>154</b>	<b>51</b>	Հվ	<b>2.1</b>

## Օդային ավազան

Այունիքի մարզի մթնոլորտային օդի աղտոտվածությունը վերահսկվում է ՀՀ բնապահպանության նախարարության “Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիտորինգի կենտրոն” ՊՈԱԿ [Էկոմոնիտորինգ] կողմից: Մարզի տարածքում գործում են չափման ստացիոնար կետեր, որոնց չափումների հիման վրա հաշվարկվում է օդի աղտոտվածության ֆոնային մակարդակը: Ստորև բերված են օդային ավազանի աղտոտվածության մասին տվյալներ ըստ Էկոմոնիտորինգի **2014** թվականի տեղեկանքի:

Որոշվել են մթնոլորտում փոշու, ծծմբի երկօքսիդի, ազոտի երկօքսիդի և գետնամերձ օզոնի պարունակությունները:

Ակտիվ նմուշառման միջոցով ընդհանուր առմամբ վերցվել է օդի մոտ **10000** փորձանմուշ: Որոշված նյութերի միջին տարեկան կոնցենտրացիաները չեն գերազանցել սահմանային թույլատրելի կոնցենտրացիաները [ՄԹ-Կ]:

Մթնոլորտային օդի դիտարկումներ` ավտոմատ սարքերի միջոցով կատարվել են դիտակայաններում: Որոշվել են մթնոլորտում ածխածնի մոնօքսիդի, ծծմբի երկօքսիդի և ազոտի օքսիդների պարունակությունները: Ավտոմատ սարքերի միջոցով ընդհանուր առմամբ կատարվել է օդի **347538** դիտարկում: Ավտոմատ դիտարկումների տվյալների համաձայն, մթնոլորտում որոշված նյութերի միջին տարեկան կոնցենտրացիաները չեն գերազանցել ՄԹ-Կ-ները:

Պասիվ նմուշառիչներով օդային ավազանի դիտարկումներ կատարվել են դիտակետերում: Վերցվել է օդի **4715** փորձանմուշ, որոնցում որոշված ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի միջին տարեկան կոնցենտրացիաները չեն գերազանցել ՄԹ-Կ-ները:

Աղյուսակ **2**. Ակտիվ նմուշառման եղանակով դիտարկումների արդյունքները

Որոշվող նյութերը [դիտակայանների քանակ]	Դիտարկված առավելագույն կոնցենտրացիա , մգ/մ <sup>3</sup> [դիտակայանի համար]	ՄԹ-Կ-ից գերազանցումների քանակ		Միջին տարեկան կոնցենտրացիա [մգ/մ <sup>3</sup> ]	ՄԹ-Կ միջին օրական [մգ/մ <sup>3</sup> ]
		>1 ՄԹ-Կ	>5 ՄԹ-Կ		
Ծծմբի երկօքսիդ <b>(7)</b>	<b>0.067</b>	<b>18</b>	-	<b>0.020</b>	<b>0.05</b>
Ազոտի երկօքսիդ <b>(7)</b>	<b>0.088</b>	<b>175</b>	-	<b>0.018</b>	<b>0.04</b>
Փոշի <b>(7)</b>	<b>2.387</b>	<b>694</b>	<b>34</b>	<b>0.126</b>	<b>0.15</b>
Գետնամերձ օզոն <b>(7)</b>	<b>0.257</b>	<b>53</b>	<b>1</b>	<b>0.010</b>	<b>0.03</b>

Սույն հայտում նախատեսված միջոցառումների արդյունքում` օդային ավազանի աղտոտվածության լրացուցիչ ավելացում չի սպասվում:

### 2.7 Թափոնների կառավարում

Աղբահանության նպատակով բազմաֆունքցիոնալ Էքստրեմալ և ԷԿՕ զբոսաշրջության համալիրի տարածքում տեղադրված են լինելու աղբահավաք տարողություններ և թվով մեկ աղբարկղ **N5** տարածքի հատակագծի **X -8608439.3520 Y -4363229.4760** հատվածում: Աղբահեռացումը կատարվում է կանոնավոր: Նախատեսվող գործունեության շահագործման ընթացքում ամսվա կտրվածքով կառաջանան կենցաղային



ադր՝ **30-40**կգ ծավալով, որի տեղափոխումը իրականացվում է Տաթև համայնքապետարանի կողմից ըստ պայմանագրի **[կնքված 04.02.2020թ.]** Հավելված **N2**: Ծինարարության ընթացքում շինադր չի գոյանալու, քանի որ գոյացող կառույցները ամբողջությամբ պատրաստ վիճակում է բերվելու տարածք և ուղղակի տեղակայվելու է:

**3 ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԳԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԳԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ**

Բոլոր տիպի շին.աշխատանքները պետք է կատարել պահպանելով պետ. նորմերը, կանոնները, ստանդարտները, ինչպես նաև նախագծի տեխնիկական պայմանները: Բոլոր տիպի թաքնված աշխատանքների համար պետք է կազմել թաքնված ախատանքների ակտ տեխնիկական հսկողություն իրականացնող մարմնի կողմից հաստատված:

Բնության մեջ աշխատանքներ կազմակերպելիս ղեկավարվել հակահրդեհային անվտանգության վարչության կողմից հաստատված դրույթներով, Բնության մեջ աշխատանքների հակահրդեհային անվտանգության պատասխանատվությունը կրում է անմիջապես շին.աշխատանքների ղեկավարը կամ նրան փոխարինող անձը:

**3.1 Ռիսկերի գնահատում**

Ներկայացվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված են՝

- փորման բեռնման և հետլիցքի աշխատանքների,
- շինարարական տեխնիկայի շահագործման,
- ճոպանային աշխատանքների հետ:

Տնտեսվարողները, որոնց գործողությունների ընթացքում հնարավոր է վնաս հասցնել Հայաստանի Հանրապետության Կարմիր գրքերում գրանցված կենդանատեսակներին կամ բուսատեսակներին, պարտավոր են միջոցներ ձեռնարկել դրանց պահպանության համար: Արգելվում է ցանկացած գործունեություն, որը կհանգեցնի Հայաստանի Հանրապետության կենդանիների և բույսերի Կարմիր գրքերում գրանցված տեսակների թվաքանակի կրճատմանը և դրանց ապրելավայրերի վատթարացմանը **[ՀՀ Կենդանական աշխարհի մասին օրենք, 03.04.2000թ հոդված 18, ՀՀ Բուսական աշխարհի մասին օրենք 23.11.1999 թ հոդված 17]:**

Չնայած, որ տարածաշրջանը ունի հարուստ կենսաբազմազանություն, նախատեսվող գործունեության տարածքի կենսաբազմազանությունը ավելի աղքատ է, ինչը հավանաբար պայմանավորված է անտրոպոգեն ազդեցություններով: Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է գլխավոր ճանապարհից **(H-45) 6** մ, Տաթև վանական համալիրից **1300** մ, <<Տաթևի անապատ>> համալիրից **400** մ, Սատանի կամուրջից **125** մետր հեռավորությունների վրա: Նախատեսվող գործունեության տարածք նախնական

այցելության և ուսումնասիրության ընթացքում ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում գրանցված բույսեր և կենդանատեսակներ չեն հանդիպել:

Նախատեսվող աշխատանքների բնույթով պայմանավորված կարելի է նշել, որ օդային գծի և ենթակառուցվածքների կառուցման ազդեցությունը չի լինի զգալի: Դրանք պայմանավորված կլինեն՝ հողային աշխատանքների ընթացքում արտանետումների քիչ քանակներով, աղմուկի առաջացմամբ, հողային ռեսուրսների և կենսաբազմազանության վրա առաջացող ազդեցություններով:

Չնայած հողային աշխատանքների փոքր ծավալին, բուսական աշխարհի վրա ազդեցությունը անխուսափելի է: Բուսական աշխարհին հնարավոր վնաս կարող է հասցնել տեխնիկական միջոցների երթևեկությունը ճանապարհներից դուրս՝ հատկապես երբ հողային ծածկույթը խոնավ է: Բուսական աշխարհին մեծապես կարող է վնասել նաև տեխնիկական միջոցների վառելիքաքսուքային (յուղ, դիզել, բենզին և այլն) նյութերի վթարային արտահոսքը:

Կենդանական աշխարհի ներկայացուցիչները լինելով շարժուն, համեմատաբար պակաս ազդեցության կենթարկվեն: Բացառություն են կազմում անթև անողնաշարավորները և նրանք, որոնց ապրելավայրը, բույնը կամ որջը կհայտնվի հողային աշխատանքների տեղամասում:

Տեխնիկական միջոցների աշխատանքի ընթացքում աղմուկի մակարդակի ավելացման պատճառով որոշ կենդանիներ հնարավոր է հեռանան այդ տարածքներից, սակայն դա կունենա ժամանակավոր բնույթ և հետագայում իրավիճակը կարող է վերականգնվել:

Թվարկված աշխատանքների ազդեցությունը նվազեցնելու նպատակով նախատեսված են բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են բնապահպանական կառավարման պլանում:

Սույն հայտում բերված են հիմնական բնապահպանական միջոցառումները ըստ ազդեցության ուղղությունների:

**3.2 Արտանետումների աղբյուրները**

Ներկայացվող աշխատանքների կատարման ընթացքում հիմնական ռիսկերը կապված են արտանետումների հետ, որոնց ցանկը բերված է ստորև՝

- փոշու արտանետումներ հիմքերի փորման ընթացքում
- դիզելային վառելիքի արտանետումներ շին. տեխնիկայի շահագործման ժամանակ:

**3.3 Բնապահպանական միջոցառումների ընդհանուր նկարագրություն**

**3.3.1 Մթնոլորտային օդ**

Օդային ավազանը աղտոտումից պահպանելու համար նախատեսված են՝

- շինարարական աշխատանքների /փոշի առաջացման աշխատանքներ/ ընթացքում անհրաժեշտ է իրականացնել ջրցան,

- պարբերաբար ստուգել շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացնել կարգավորում:

**3.3.2 Ջրային ռեսուրսներ**

Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով նախատեսվել են հետևյալ միջոցառումները.

- ջրման ծավալները հաշվարկվում են այնպես, որ չառաջանան մակերևութային հոսքեր և ջուրը բավականացնի միայն բուսականությանը ջրով ապահովելու համար,
- անձրևվները տարածքում հոսքեր չեն առաջացնի և կպարպվեն բնական ճանապարհով:

**3.3.3 Կենսաբազմազանություն**

Կենսաբազմազանության վրա հնարավոր ազդեցությունների համար առաջարկվող մեղմացնող միջոցառումները ներառում են.

- "Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին" ՀՀ օրենքի **17**-րդ հոդվածի պահանջների համապատասխան՝ բացառել բուսական և կենդանական աշխարհի ներկայացուցիչների բնակության միջավայրի պայմանների խախտումը, ինչպես նաև անտառհատումները:
- Ենթակառուցվածքների տեղադրման վայրերում թփերի առկայության դեպքում հենապան դիրքի տեղաշարժում **(թույլատրելի սահմաններում)**, հակառակ դեպքում դրանց վերատնկում համապատասխան մարմնի հետ համաձայնեցված:
- Աշխատանքների ընթացքում բացառել տեխնիկա-տրանսպորտային միջոցների երթևեկությունը ճանապարհներից դուրս:
- Տեխնիկական միջոցների վառելիքաքսուրային **(յուղ, դիզել, բենզին և այլն)** նյութերի վթարային արտահոսքը բացառելու համար տեխնիկա-տրանսպորտային միջոցները շահագործել միայն սարքին վիճակում:
- Հնարավորինս արագ վերակազմել խախտված հողաբուսաշերտը:
- Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների հայտնաբերման դեպքում առանձնացնել տվյալ պահպանվող գոտին:
- Կենդանական աշխարհի ներկայացուցիչների բնադրման և թխսման ժամանակամիջոցում դադարեցնել տեխնիկական միջոցների կիրառմամբ աշխատանքները:
- Ամբողջ շինարարական աշխատանքների ընթացքում հնարավորինս նվազեցնել աղմուկն ու լուսավորությունը:
- Անհարժեշտության դեպքում մշակել գործողությունների պլան հիմնվելով ՀՀ կառավարության "ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին" թիվ **781**-Ն որաշման դրույթների վրա:

**3.3.5 Արտակարգ իրավիճակների պատրաստվածությունը**

Աշխատանքների ընթացքում հնարավոր արտակարգ իրավիճակներն են՝

- Հրդեհի առաջացումը
- Աշխատողների վնասվածքները
- Շահագործվող տեխնիկայի հետ վթարները:

Արտակարգ իրավիճակներին արագ արձագանքելու համար նախատեսված են հետևյալ միջոցառումները՝

- Մինչ աշխատանքների սկիզբը բոլոր աշխատողները, այդ թվում նաև վարորդները, անցնում են հրահանգավորում ըստ աշխատանքի անվտանգության կանոնների: Հրահանգավորումը իրականացնում է աշխատանքների ղեկավարը:
- Նաև աշխատանքային հարթակը և տրանսպորտային միջոցները հազեցվում են հրդեհաշիջման առաջնային միջոցներով ու դեղարկիչով, իսկ աշխատողներն անցնում են դրանց ճիշտ օգտագործմանն, ինչպես նաև առաջին բուժօգնության ցուցաբերմանն ուղղված հրահանգավորում:
- բոլոր աշխատողներին տրվելու են անհատական և կոլեկտիվ պահպանության միջոցներ: Հնարավոր վնասվածքների դեպքում տուժածին կցուցաբերեն առաջին բուժօգնության, ապա, անհրաժեշտության դեպքում, կտեղափոխվի տարածաշրջանի մոտակա բժշկական հաստատությունը:

Ըստ նախնական գնահատման, ապահովելով նշված միջոցառումների պատշաճ մակարդակով իրականացումը, կարելի է արտակարգ իրավիճակների ռիսկը հասցնել նվազագույնի, իսկ առաջացման դեպքում արագ և արդյունավետ հակազդել դրանց:

**3.3.5 Աղմուկ**

Աղմուկի մակարդակը նվազեցնելու համար նախատեսվում է՝

- աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին,
- պարբերաբար ստուգել և կարգավորել տեխնիկական միջոցների շարժիչները,
- տեխնիկական միջոցների ընտրության ժամանակ հատուկ ուշադրություն դարձնել դրանց աղմուկի մակարդակին:

**ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ**

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ	ՊԱՐԱՄԵՏՐԵՐ	ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՍՏՈՒԳԱԹԵՐԹԻԿ
Ընդհանուր դրույթներ	Նախագգուշացումներ և աշխատողների անվտանգություն	<p><b>(ա)</b> Կառուցման աշխատանքների ընթացքում և շրջակա միջավայրի անվտանգությունը վերահսկող մարմինները և համայնքը պետք է նախագգուշացված լինեն սպասվող գործընթացների վերաբերյալ</p> <p><b>(բ)</b> Կառուցման աշխատանքների համար անհրաժեշտ բոլոր պահանջվող թույլտվությունները ձեռք են բերվելու</p> <p><b>(ց)</b> Կապալառուն պաշտոնապես համաձայնել է, որ աշխատանքները կիրականացվեն ապահով և կարգապահ՝ նվազագույնի հասցնելով ազդեցությունը հարևան տնտեսությունների և շրջակա միջավայրի վրա:</p> <p><b>(դ)</b> Ծինհրապարակում տեղադրվող համապատասխան տեղեկատվական վահանակները աշխատողներին կիրազեկեն հիմնական կանոնների և նորմերի վերաբերյալ:</p>
Կառուցման Աշխատանքներ	Օդի որակ	<p><b>(ա)</b> Ծինաշխատանքների իրականացման ընթացքում հողային հանույթը անընդհատ կցողվեն ջրով՝ առաջացող փոշու քանակը բացառելու նպատակով</p> <p><b>(բ)</b> Շրջակա տարածքները <b>[ճանապարհները]</b> պետք է գերծ պահվեն մուտք ու ելքից առաջացող փոշուց՝ ջրով ցողելով հողային ճանապարհները:</p>
	Աղմուկ	<p><b>(ա)</b> Ծինաշխատանքներից գոյացած աղմուկը կսահմանափակվի թույլատրված ժամերի միջակայքում</p> <p><b>(բ)</b> Կառուցման աշխատանքների ընթացքում անհրաժեշտության դեպքում օգտագործվելիք շարժիչները և էլեկտրականությամբ սնվող սարքերը պետք է ծածկվեն:</p>
	Թափոնների կառավարում	<p><b>(ա)</b> Հողային հանույթների հեռացման վայրը նախապես որոշված է համայնքապետարանի կողմից տրամադրված տեղեկանքով <b>[Հավելված 3]:</b></p> <p><b>(բ)</b> Ծինարարության ընթացքում շինադր չի գոյանալու, քանի որ օգտագործվող ամբողջ նյութերը տարածք է բերվելու պատրաստի վիճակում և ուղղակի տեղակայվելու է:</p>
	Կենսաբազմազանություն	<p><b>(ա)</b> "Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին" ՀՀ օրենքի <b>17</b>-րդ հոդվածի պահանջների համապատասխան՝ բացառել բուսական և կենդանական աշխարհի ներկայացուցիչների բնակության միջավայրի պայմանների խախտումը, ինչպես նաև անտառահատումները:</p> <p><b>(բ)</b> Ենթակառուցվածքների տեղադրման վայրերում թփերի առկայության դեպքում հենասյան դիրքի տեղաշարժում <b>[թույլատրելի սահմաններում]</b>, հակառակ դեպքում դրանց վերատնկում համապատասխան մարմնի հետ համաձայնեցված:</p> <p><b>(ց)</b> Աշխատանքների ընթացքում բացառել տեխնիկա-տրանսպորտային միջոցների երթևեկությունը ճանապարհներից դուրս:</p> <p><b>(դ)</b> Տեխնիկական միջոցների վառելիքաքսուքային <b>[յուղ, դիզել, բենզին և այլն]</b> նյութերի վթարային արտահոսքը բացառելու համար տեխնիկա-տրանսպորտային միջոցները շահագործել միայն սարքին վիճակում:</p> <p><b>(ե)</b> Հնարավորինս արագ վերակազմել խախտված հողաբուսաշերտը:</p> <p><b>(զ)</b> Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների հայտնաբերման դեպքում առանձնացնել տվյալ պահպանվող գոտին:</p> <p><b>(է)</b> Կենդանական աշխարհի ներկայացուցիչների բնադրման և թխաման ժամանակամիջոցում դադարեցնել տեխնիկական միջոցների կիրառմամբ աշխատանքները:</p> <p><b>(ը)</b> Ամբողջ շինարարական աշխատանքների ընթացքում հնարավորինս նվազեցնել աղմուկն ու լուսավորությունը:</p> <p><b>(յ)</b> Անհրաժեշտության դեպքում մշակել գործողությունների պլան հիմնվելով ՀՀ կառավարության "ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին" թիվ <b>781</b>-Ն որաշման դրույթների վրա:</p>
Կեղտաջրերի հեռացում	Ջրի որակ	<p><b>(ա)</b> Աշխատանքային տրանսպորտային միջոցները և սարքավորումները պետք է լվացվեն համայնքում նախատեսված ավտոլվացման տարածքում, որտեղից կեղտաջրի արտահոսք շրջակա միջավայր չի լինի:</p>
Հետիոտների և երթևեկության ապահովություն	Կառուցապատման աշխատանքների հետևանքով հետիոտներին կամ	<p><b>(ա)</b> Ծինարարության ազգային նորմերի համաձայն կապալառուն պետք է ապահովի պատշաճ անվտանգություն և կառուցապատման առնչվող երթևեկության կարգավորում, ինչը ներառում է, բայց չի սահմանափակվում հետևյալով.</p> <ul style="list-style-type: none"> <li><input type="checkbox"/> պարզ տեսանելի ցուցանակներ, գոուշացնող նշաններ շինհրապարակում հանրությանը պոտենցյալ վտանգների մասին նախագգուշացնելու համար</li> <li><input type="checkbox"/> Անձնակազմի կրթման համակարգ և երթևեկության կառավարման համակարգ, հատկապես՝ շինհրապարակ մուտք</li> </ul>

	<p>հանրային տրանսպորտին սպառնացող ուղղակի կամ անուղղակի վտանգներ</p>	<p>գործելու համար:</p> <ul style="list-style-type: none"> <li><input type="checkbox"/> Համապատասխանեցնել աշխատանքային ժամերը երթևեկության ակտիվության հետ, խուսափել ակտիվ երթևեկությունից՝ մարդկանց ակտիվ տեղաշարժի ժամերին:</li> <li><input type="checkbox"/> Երթևեկության ակտիվ կառավարում շինհրապարակում փորձված և երևացող անձնակազմի կողմից, եթե վերջինս անհրաժեշտ է մարդկանց ապահով և հարմար անցուղարձի համար.</li> </ul>
--	--	--

**ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ**

1. Մթնոլորտային արտանետումների գույքագրման ձեռնարկ, **EMEP /EEA, 2009:**
2. СН 245-71. Санитарные нормы проектирования промышленных предприятий.
3. СНиП **1.02.01 -85** Инструкция о составе, порядке разработки, согласования и утверждения проектно-сметной документации на строительство предприятий, зданий и сооружений.
4. СНиП 2.04.02-84. Водоснабжение. Наружные сети и сооружения.
5. Сборник методик по расчету выбросов в атмосферу загрязняющих веществ различными производствами, Госкомгидромет, Ленинград, 1986.
6. Инструкция о порядке рассмотрения, согласования и экспертизы воздухоохраных мероприятий и о выдаче разрешений на выброс загрязняющих веществ в атмосферу по проектным решениям, ОНД-**84-Н**.
7. Укрупненные нормы водопотребления и водоотведения для различных отраслей промышленности, Стройиздат, Москва, 1982г.
8. Временное методическое пособие по расчету выбросов от неорганизованных источников в промышленности строительных материалов, МИНПРОМСТРОЙ СССР, Москва 1984г.
9. Нормы расхода топлив и смазочных материалов на автомобильном транспорте.
10. Нормы расхода жидкого топлива для машин, эксплуатирующихся в предприятиях уборки городских территорий, санитарной очистки и ремонтно-строительном производстве.
11. "Բնապահպանական վճարների դրույքաչափերի մասին" ՀՀ օրենքը, ընդունված **2006** թվականի դեկտեմբերի **20**-ին:
12. ՀՀ Կառավարության **2006** թվականի փետրվարի **2**-ի "նախաձայներում մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի խտությունների [կոնցենտրացիաների-ՍԹ-Կ] նորմատիվները հաստատելու մասին" թիվ **160**-Ն որոշում:

## Ամփոփաթերթ

### Առաջարկությունների և դիտողությունների վերաբերյալ

- Նախնական գնահատման հայտում ներառված են նախատեսվող գործունեության ենթակա ամբողջ տարածքի շրջակա միջավայրի նկարագիրը հիմնավորումներով, նաև ըստ Հավելվածների: Հողատեսքերի նպատակային և գործառնական նշանակությունները ձևակերպված են համաձայն ՀՀ հողային օրենսգրքի Հոդվածներ **7, 8, 25, 76** հիմքերով:
- Անտառային հողերի վարձակալության պայմանագիր **Հավելված 1**
- Աշխատանքային նախագիծ (**Հավելված 11**), էլ.տեխնիկական պայմաններ (**Հավելված 4**),
- Նախնական գնահատման հայտում (էջ **8,14**) ներառված է սանհանգույց-լոգարան և սեպտիկ հորի նկարագիրը, իսկ ճարտարապետաշինարարական մասում հստակ տեղադիրքը և ծավալը:
- Աշխատանքների կատարումը չի նախատեսում ունենալ կենտրոնացված արտադրահրապարակ, լինելու են փոքրիկ շինհրապարակներ (**15մ<sup>2</sup>**) որոնք ամբողջովին շրջափկված են լինելու: Արտադրական հոսքեր չեն առաջանալու, իսկ անձրևաջրերը կպարպվեն բնականոն հունով քանի որ խոչնդոտներ չի առաջանալու աշխատանքների և շահագործման ժամանակ:
- Հողաքարային հանույթը տեղափոխվելու է , Խիգոյի ոլորան**6** կոչվող տարածք:
- **1400**քմ կլինի պաշտպանական և սանիտարափոխանակ նշանակության ռեկրեացիոն գոտի համաձայն ՀՀ կառավարության **N 108**-ն որոշման: Ծառերի տեսականին ճեմեյիքների համար կլինեն մրգատու (նշենի սովորական(**Am ygdalus communis L .**), սերկևիլենի սովորական(**Cydonia oblonga Mill.** ), կեռասենի(**Cerasus avium M oench.**), ընկուզենի սովորական(**Juglans regia L .**), տանձենի ուռատերև(**Pyrus salicifolia Pall.**), տանձենի կովկասյան(**Pyrus caucasica Fed.**), նոնենի(**Punica granatum L .**) ) ծառերով ընդհանուր **30** հատ : Հաշվի առնելով առաջին փուլի ծառտնկման աշխատանքները ծրագրում նշված ընդհանուր **2000** ծառը կլինի երրորդ փուլի ավարտին երեք տարվա ընթացքում, նախապես փոխհամաձայնությամբ իրավասու մարմինների հետ:
- Նախնական ժամանակահատվածում աշխատանքի ընդունված այգեպանները ծառերը կջրեն դուլներով, իսկ հետո ոռոգումը լինելու է բնական:
- Աղբամանի տեղադրման վայրը և քանակը նշված է **37**-րդ էջում:
- Ավտոմեքենաների կայանում համար նախատեսված բացօթյա տարածքում միաժամանակ կարող է կայանել **1** ավտոբուս, **4** մինիվեն, **7** թեթև մարդատար ավտոմեքենա: Ծինարարության ընթացքում օգտագործվող շինտեխնիկայի կայանման խնդիր չի առաջանում:
- Ծինարարության և շահագործման փուլում մակերևութային ջրերի ու պատմամշակութային արժեքների վրա ոչ մի բացասական ներգործություն չի լինի, քանի որ հեռավորությունը ակնհայտ բավարար հիմնավորում է: Ելնելով Զիփլայնի անվտանգության կանոնակարգից՝ հաճախորդի գրպաններն ու ձեռքերը պետք է դատարկ լինի: (էջ **38**):
- Արևային էներգիայի աղբյուրներ և համապատասխան լուծումներ կլինեն երկրորդ փուլում:
- Ներառված է Կենսաբազմազանություն մասում (էջ **39**):
- Ներառված է Բնության հատուկ պահպանվող տարածքներ մասում (էջ **24**):



- Հավելված **1-** Անտառային հողերի վարձակալության պայմանագիր
- Հավելված **2-** Աղբահանության պայմանագիր
- Հավելված **3-** Հողային և քարային հանույթի տեղափոխման վայրի տեղեկանք
- Հավելված **4-** , ՀԷՑԻ ՓԲԸ Էլեկտրամատակարարման տեխ. պայմաններ
- Հավելված **5-** Սեպտիկ հորի տեխնիկական անձնագիր **(ռուսերեն)**
- Հավելված **6-** , Վիոլիա ջուր**Ի** պարզաբանում դիմումի վերաբերյալ  
 Տարև Համայնքապետարանի տեղեկանք
- Հավելված **7-** Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի համաձայնագիր
- Հավելված **8-** Պաշտպանության նախարարության համաձայնագիր
- Հավելված **9-** ՀՀ Կրթության, Գիտության, Մշակույթի և Սպորտի  
 նախարարության Համաձայնագիր
- Հավելված **10-** Համայնքային հողերի վկայականներ
- Հավելված **11-** Աշխատանքային Նախագիծ

**(Վկ. N 15102 019-09-0018, N 15102019 -09-0019, N 15102019-09-0020)**